

## Հ Ա Մ Ա Չ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

### Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազության միջև համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը և Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազությունը, այսուհետ՝ Կողմերը,

դեկլարավելով 1993թ. հունվարի 22-ի՝ «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավահարաբերությունների մասին» Մինսկի Կոնվենցիայի, 1997թ. մարտի 28-ի՝ «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավահարաբերությունների մասին» 1993թ. հունվարի 22-ի Կոնվենցիայի Արձանագրության, 1957թ. դեկտեմբերի 13-ի՝ «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի և 1959թ. ապրիլի 20-ի «Քրեական գործերով փոխօգնության մասին» Եվրոպական կոնվենցիայի դրույթներով, ինչպես նաև քրեական դատավարության ոլորտում միջազգային համագործակցության վերաբերյալ այլ միջազգային պայմանագրերով,

կարևորելով հանցավորության, մասնավորապես դրա անդրազգային ձևերի դեմ պայքարում միջազգային համագործակցության ամրապնդումը, օրինականության ապահովումը և միջազգային իրավունքի նորմերին և հանրաճանաչ սկզբունքներին համապատասխան մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը,

ելնելով Կողմերի փոխադարձ ձգտումից՝ զարգացնել փոխգործակցությունը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերով,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

#### Հոդված 1 Ընդհանուր պարտավորություն

Կողմերը համագործակցություն են իրականացնում սույն Համաձայնագրին համապատասխան՝ գործելով իրենց իրավասության շրջանակներում և պահպանելով իրենց պետությունների ազգային օրենսդրությանը և նրանց մասնակցությամբ գործող միջազգային պայմանագրերը:

#### Հոդված 2 Համագործակցության հիմնական ուղղությունները

Կողմերը համագործակցում են հետևյալ հիմնական ուղղություններով.

քրեական և այլ գործերով իրավական օգնության ու իրավական հարաբերությունների մասին, այդ թվում հանձնման և հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտների լվացման դեմ պայքարի հարցերով միջազգային պայմանագրերի կատարման կազմակերպում և ապահովում,

օպերատիվ-հետախուզական գործունեություն, հետաքննություն և նախաքննություն իրականացնող մարմինների կողմից օրենքների կատարման նկատմամբ հսկողություն,

պատժի և դատարանի կողմից նշանակվող հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն,

հանցավորության դեմ պայքարում իրավապահ մարմինների գործունեության համակարգում,

ապօրինի դատապարտված և բռնադատված անձանց արդարացման հարցերի քննարկում,  
դատախազության մարմինների և հաստատությունների համար կադրերի պատրաստում և որակավորման բարձրացում,  
փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերով գիտատու մնական գործունեություն:

### **Հոդված 3 Համագործակցության ձևերը**

Սույն Համաձայնագրի 1-ին և 2-րդ հոդվածների դրույթների կատարման նպատակով Կողմերի համագործակցությունն իրականացվում է մասնավորապես հետևյալ ձևերով.

աշխատանքային փորձի փոխանակում, այդ թվում ճանաչողական այցերի, ստաժավորումների, խորհրդատվությունների և գիտաժողովների անցկացման միջոցով,

հանցավորության, այդ թվում դրա կազմակերպված ձևերի, ահաբեկչության, կոռուպցիայի, զենքի, թմրամիջոցների և հոգեմեդրոնոն նյութերի ապօրինի շրջանառության, տնտեսական հանցագործությունների, ապօրինի ներգաղթի և հանրության համար մեծ վտանգավորություն ներկայացնող հանցատեսակների դեմ պայքարում փորձի փոխանակում,

Կողմերի գործունեության հարցերով, այդ թվում հանցավորության զարգացման միտումների և մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտում տեղեկատվության փոխանակում,

օրենսդրական և այլ նորմատիվ-իրավական ակտերի, ինչպես նաև գերատեսչական պարբերականների և մեթոդական նյութերի կանոնավոր փոխանակում,

համատեղ գիտական ուսումնասիրությունների, գիտական և գիտագործնական խորհրդատվությունների անցկացում, գիտական հրապարակումների պատրաստում,

փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող, այդ թվում միջազգային կազմակերպությունների և ֆորումների (ՄԱԿ, ԱՊՀ, ԵԽ, ԵԱՀԿ և այլ) քննարկմանը ներկայացվող հարցերով խորհրդատվությունների անցկացում,

տեղեկատվական-իրավական ապահովման բնագավառում աջակցության ցուցաբերում, այդ թվում իրավական կարգավորման միջազգային փորձի և միջազգային համագործակցության մասին նյութերի տրամադրում,

դատախազության մարմինների և հաստատությունների համար կադրերի պատրաստում և որակավորման բարձրացում, այդ թվում դասախոսությունների և գիտաժողովների անցկացում, գիտական ձեռնարկների համատեղ պատրաստում,

փոխաշահավետության հիմքով ուսումնական գրականության և գիտական հրապարակումների փոխանակում:

### **Հոդված 4 Համագործակցության զարգացում**

Սույն Համաձայնագիրը չի խոչընդոտում Կողմերին սահմանելու և զարգացնելու համագործակցության փոխադարձաբար ընդունելի այլ ուղղություններ և ձևեր, սույն Համաձայնագրի 1-ին հոդվածով սահմանված պայմանների պահպանմամբ:

## **Հոդված 5**

### **Աջակցություն ցուցաբերելու մասին հարցումներ**

1. Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունն իրականացվում է շահագրգիռ Կողմերի հարցումների հիման վրա կամ այն Կողմի նախաձեռնությամբ, ըստ որի առաջարկվող աջակցությունը կամ համատեղ միջոցառումը հետաքրքրություն է ներկայացնում մյուս Կողմի համար:

2. Հարցումը կամ նախաձեռնող առաջարկությունը ուղարկվում է գրավոր ձևով, սակայն անհետաձգելի դեպքերում դրանք կարող են փոխանցվել բանավոր, երեք օրվա ընթացքում, դրանց հետագա պարտադիր գրավոր հաստատման պայմանով, այդ թվում՝ տեքստի փոխանցման տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

Հարցման իրական լինելու վերաբերյալ կասկածների դեպքում կարող է պահանջվել դրա հաստատումը:

3. Աջակցություն ցույց տալու մասին հարցումը պետք է պարունակի.

աջակցություն հայցող մարմնի և հարցվող մարմնի անվանումը,

գործի հանգամանքների շարադրանքը,

հարցման նպատակի և հիմնավորման մասին նշում,

հայցվող աջակցության բովանդակության նկարագրությունը,

ցանկացած այլ տեղեկատվություն, որը կարող է օգտակար լինել հարցման պատշաճ կատարումն ապահովելու համար:

4. Գրավոր փոխանցված կամ հաստատված՝ աջակցություն ցույց տալու մասին հարցումը ստորագրվում է հարցում անող մարմնի ղեկավարի կամ նրա տեղակալի կողմից:

## **Հոդված 6**

### **Աջակցություն ցուցաբերելու մերժումը**

1. Աջակցություն ցուցաբերելու մասին հարցումը լրիվ կամ մասնակիորեն մերժվում է, եթե հարցվող Կողմը ենթադրում է, որ դրա կատարումը կարող է վնաս պատճառել իր պետության ինքնիշխանությանը, անվտանգությանը կամ այլ էական շահերին, կամ հակասում է իր պետության օրենսդրությանը կամ միջազգային պարտավորություններին:

2. Հարցվող Կողմը հնարավորության դեպքում, մինչև աջակցության ցուցաբերումը մերժելու մասին որոշման ընդունումը, խորհրդատվություն է անցկացնում հարցում անող Կողմի հետ այն հարցի քննարկման նպատակով, թե արդյո՞ք կարող է աջակցությունը ցուցաբերվել այն պայմանների պահպանմամբ, որոնք հարցվող Կողմը համարում է անհրաժեշտ: Առաջադրված պայմանների հետ համաձայնության դեպքում հարցումը անող Կողմը ապահովում է դրանց պահպանումը:

3. Հարցում անող Կողմը գրավոր տեղեկացվում է հարցման կատարման լրիվ կամ մասնակի մերժման մասին՝ մերժման պատճառների նշմամբ:

## **Հոդված 7**

### **Հարցման կատարումը**

1. Հարցվող Կողմը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները հարցման արագ և հնարավորինս լրիվ կատարումն ապահովելու նպատակով:

Հարցում անող Կողմը անհապաղ տեղեկացվում է հարցման կատարմանը խոչընդոտող կամ դրա կատարումը էապես ձգձգող հանգամանքների մասին:

2. Եթե հարցման կատարումը չի մտնում հարցվող Կողմի իրավասության մեջ, ապա վերջինս սանհապաղ տեղեկացնում է այդ մասին հարցում անող Կողմին և նրա խնդրանքով փոխանցում է հարցումը իր պետության իրավասու մարմնին:

3. Հարցվող Կողմը իրավասու է հայցել լրացուցիչ տեղեկություններ, որոնք՝ ըստ իրեն, անհրաժեշտ են հարցման պատշաճ կատարման համար:

4. Հարցման կատարման ընթացքում կիրառվում է հարցվող Կողմի պետության օրենսդրությունը, սակայն հարցում անող Կողմի խնդրանքով կարող է կիրառվել վերջինիս պետության օրենսդրությունը, եթե դա չի հակասում հարցվող Կողմի օրենսդրությանը կամ ստանձնած միջազգային պարտավորություններին:

5. Եթե հարցվող Կողմը գտնում է, որ հարցման անհապաղ կատարումը կարող է խոչընդոտել իր պետությունում ընթացող վարույթին, նա կարող է հետաձգել հարցման կատարումը կամ դրա կատարումը կապել այն պայմանների պահպանման հետ, որոնք սահմանվել են որպես անհրաժեշտ հարցում անող Կողմի հետ խորհրդատվության արդյունքում: Եթե հարցում անող Կողմը համաձայն է աջակցության ցուցաբերմանը առաջադրված պայմանների պահպանմամբ, ապա ապահովում է այդ պայմանների պահպանումը:

6. Հարցվող Կողմը հարցում անող Կողմի խնդրանքով ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ հարցման ստացման փաստի, այդ հարցման բովանդակության և ուղեկից փաստաթղթերի, ինչպես նաև՝ աջակցության ցուցաբերման փաստի գաղտնիության ապահովման ուղղությամբ:

Գաղտնիության պահպանմամբ հարցման կատարման անհնարինության դեպքում հարցվող Կողմը տեղեկացնում է այդ մասին հարցում անող Կողմին, որն էլ որոշում է նման պայմաններում հարցման կատարման անհրաժեշտության հարցը:

7. Հարցվող Կողմը հնարավոր սեղմ ժամկետներում տեղեկացնում է հարցում անող Կողմին հարցման կատարման արդյունքների մասին:

## **Հոդված 8**

### **Ստացված տեղեկատվության և փաստաթղթերի օգտագործման սահմանափակումները**

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է մյուս Կողմից ստացված տեղեկատվության և փաստաթղթերի գաղտնիությունը, եթե դրանք կրում են փակ բնույթ կամ եթե փոխանցող Կողմն անցանկալի է համարում դրանց հրապարակումը: Նման տեղեկատվության և փաստաթղթերի գաղտնիության աստիճանը սահմանում է փոխանցող Կողմը:

2. Սույն Համաձայնագրի հիման վրա ստացված տեղեկատվությունը և փաստաթղթերը, առանց դրանք տրամադրած Կողմի համաձայնության չեն կարող օգտագործվել այլ նպատակներով, քան այն, որոնց համար դրանք հայցվել և տրամադրվել են, եթե միայն դրանք տրամադրած Կողմի պետությունում դրանք համընդհանուր հասանելի չեն:

3. Սույն Համաձայնագրի հիման վրա մի Կողմից ստացված տեղեկատվությունը և փաստաթղթերը երրորդ պետության տրամադրելու համար չի պահանջվում դրանք տրամադրած Կողմի նախնական համաձայնությունը, եթե այդ Կողմի պետությունում դրանք համընդհանուր հասանելի են և եթե տրամադրելիս նման պայման չի առաջադրվել:

4. Սույն հոդվածի դրույթները չեն բացառում հարցման կատարման արդյունքում ստացված տեղեկության կամ փաստաթղթերի օգտագործումը կամ հրապարակումը, եթե հարցում անող Կողմի պետության օրենսդրությամբ պարտադիր է նման ձևով գործելը: Հարցում անող Կողմը նախապես տեղեկացնում

է հարցվող Կողմին նման տեղեկատվության և փաստաթղթերի հնարավոր կամ ենթադրվող օգտագործման կամ հրապարակման մասին:

### **Հոդված 9 Ծախսերը**

Կողմերն իրենք են կրում սույն Համաձայնագրի կատարման ընթացքում ծագած ծախսերը, եթե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում չի համաձայնեցվի այլ կարգ:

### **Հոդված 10 Լեզուները**

Սույն Համաձայնագրի հիման վրա համագործակցելիս Կողմերն օգտագործում են հայերենը և ռուսերենը:

### **Հոդված 11 Փոփոխություններ և լրացումներ**

Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են համապատասխան արձանագրություններով և ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 16-րդ հոդվածով նախատեսված կարգով, և հանդիսանում են դրա անբաժանելի մասը:

### **Հոդված 12 Համագործակցության համակարգումը**

1. Սույն Համաձայնագրի շրջանակներում Կողմերի համագործակցությանն ուղղված միջոցառումների համակարգումը դրվում է Կողմերի հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումների վրա, որոնք կարող են միմյանց հետ հաղորդակցվել անմիջականորեն.

Հայկական կողմից՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության միջազգային-իրավական կապերի բաժին,

Ռուսական կողմից՝ Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության գլխավոր վարչություն:

2. Անհրաժեշտության դեպքում Կողմերը կարող են սահմանել նաև իրենց այլ կառուցվածքային ստորաբաժանումներ կամ իրենց ենթակայության տակ գտնվող այլ հաստատություններ, որոնք կարող են սույն Համաձայնագրի դրույթների կատարման նպատակով անմիջական շփումներ իրականացնել՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով միմյանց:

### **Հոդված 13 Աշխատանքային հանդիպումներ և խորհրդատվություններ**

Կողմերի ներկայացուցիչներն անհրաժեշտության դեպքում անցկացնում են աշխատանքային հանդիպումներ և խորհրդատվություններ սույն Համաձայնագրի հիման վրա համագործակցության ամրապնդման և արդյունավետության բարձրացմանն ուղղված հարցերի քննարկման նպատակով:

**Հոդված 14**  
**Տարածայնությունների լուծումը**

Սույն Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման հետ կապված տարածայնությունները կարգավորվում են Կողմերի խորհրդատվությունների և բանակցությունների միջոցով:

**Հոդված 15**  
**Այլ միջազգային պայմանագրերի հետ փոխհարաբերությունը**

Սույն Համաձայնագրի դրույթները չեն շոշափում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության մասնակցությամբ այլ միջազգային պայմանագրերից բխող իրավունքներն ու պարտականությունները:

**Հոդված 16**  
**Եզրափակիչ դրույթներ**

1. Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով և ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Կողմերի ազգային օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի կատարման մասին միմյանց ծանուցելու օրվանից:

Սույն Համաձայնագրի գործողությունը դադարում է Կողմերից մեկի՝ դրա գործողությունը դադարեցնելու մտադրության մասին ծանուցումը մյուս Կողմից ստացվելու օրվանից 60 օր հետո:

2. Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից դադարում է 1993թ. հունվարի 15-ին Մոսկվա քաղաքում ստորագրված «Հայաստանի Հանրապետության դատախազության և Ռուսաստանի Դաշնության դատախազության միջև «Իրավական օգնության և համագործակցության մասին» Համաձայնագրի գործողությունը:

Կատարված է Երևան քաղաքում, 2006 թվականի սեպտեմբերի 22-ին, երկու բնօրինակով՝ յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն. ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետության  
գլխավոր դատախազության կողմից

Ռուսաստանի Դաշնության գլխավոր  
դատախազության կողմից

---

գլխավոր դատախազ  
Աղվան Հովսեփյան

---

գլխավոր դատախազ  
Յուրի Չայկա